Արձանագրություն 6

ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/58 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով վերականգնողական աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան	27.12.19թ. ժ.15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կարեն Սիմոնյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝	Հրանտ Հովսեփյան/գնահատող/
	Ստեփան Ղազարյան/գնահատող/
	Սերոբ Գևորգյան /բացող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Սիմոնյան

1. Պայմանագրի կնքման գործընթացի մասին
(Կ.Սիմոնյան)

1.1 Ընդունել ի գիտություն,որ

1.1.1 «Շինարար-97» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ armeps համակարգի միջոցով 14.11.2019թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և վերջինս ս.թ նոյեմբերի 15-ին ներկայացրել է պայմանագրի ստորագրված օրինակները և պայմանագրի կատարման ապահովումը:

1.1.2 19.11.2019թ. պատասխանատու ստորաբաժանումը տեղեկացվել է, որ պայմանագրի կնքման օրվանից մինչև ս.թ դեկտեմբերի 25-ն առկա օրերի քանակն ավելի քիչ է, քան պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման օրերի քանակը (պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը): Պատասխանատու ստորաբաժանումն առաջարկել է պայմանագրի կողմի գրավոր համաձայնության առկայության դեպքում պայմանագրի կատարման վերջնաժամկետը սահմանել մինչև ս.թ դեկտեմբերի 25-ը:

1.1.3 Պատասխանատու ստորաբաժանման առաջարկությունը ս.թ նոյեմբերի 25-ին ներկայացվել է «Շինարար-97» ՍՊԸ-ին: «Շինարար-97» ՍՊԸ-ն ս.թ նոյեմբերի 29-ին պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ աշխատանքները նշված սեղմ ժամկետներում հնարավոր չէ իրականացնել:

1.1.4 Ս.թ դեկտեմբերի 12-ին պատասխանատու ստորաբաժանումը տեղեկացվել է պայմանագիր կնքելու անհնարինության մասին, սակայն վերջինիս կողմից մինչ օրս այլ առաջարկ չի ներկայացվել

2. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին

2.1 Հաշվի առնելով սույն արձանագրության 1.1.3 կետը և ՀՀ կառավարության 15.06.2018թ. N 706-Ն որոշմամբ հաստատված «Բյուջեների կատարման» կարգի 84-րդ կետով սահմանված սահմանափակումները, ըստ որի գնումների մասով ստանձնած պարտավորությունների կատարման համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը գանձապետարանն ընդունում է մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ, իսկ պայմանագիր կնքելու դեպքում պարտավորությունների կատարման փաստաթղթերը ակնհայտորեն հնարավոր չէ ներկայացնել սահմանված ժամկետներում, ուստի ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/58 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիրը չի կարող կնքվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով՝ ՀՀՄՆԳՀԱՇՁԲ-19/58 ծածկագրով գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Կ.Սիմոնյան /նախագահ/

Հ.Հովսեփյան

Ա.Ղազարյան

Ս.Գևորգյան

Ա.Ստեփանյան

Ա. Սիմոնյան /քարտուղար/